

Տեղեկատվություն

«Դիլիջան» ԱՊ » ՊՈԱԿ-ի 2015թ-ի սեպտեմբեր ամսին կատարած աշխատանքները

2015 թ-ի Աշխատանքային պլան-ծրագրով նախատեսված աշխատանքներից «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի բաժիններում սեպտեմբեր ամսում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից ԱՊ-ի տարածքում հայտնաբերվել է ապօրինի հատված 34 ծառ, որոնց համար կազմվել է 8 հատ անտառոխախտման արձանագրություն և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին՝ ընթացք տալու: Իրականացվել է նախատեսված հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում 2 կմ և վերանորոգում 1 կմ ինչպես նաև հանքայնացված շերտի կառուցման 2 կմ և 2 կմ-ի խնամքի աշխատանքներ:

2. Գիտական բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել են՝ «Դիլիջան» ազգային պարկի էկոհամակարգերի վրա ազդող գործոնների ուսումնասիրում: Կատարվել են դիտայցեր Եվրոպական այծյամի պոպուլիացիայի ուսումնասիրման վերաբերյալ: Ուսումնասիրվել է Բալոբան տեսակի բազեի պոպուլիացիան:

3. Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի կողմից շարունակվում է իրականացվել էկոտուրիստական ծառայությունների մատուցման աշխատանքները:

4. Կազմակերպությունում անց է կացվել մրցույթ՝ կազմակերպության կարիքների համար ավտոմեքենաների ձեռքբերման համար: